«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ինչպես կառավարել ընտանեկան բյուջեն
ԱՌԱՐԿԱ	տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Աստղիկ Սարգսյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N5 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

«Տեխնոլոգիա» առարկայի հիմնական առաքելությունը……4

Ընտանեկան բյուջեի պլանավորում……7

Վեց տարաների մեթոդը……11

Ինչպես պլանավորել ընտանեկան բյուջեն - ծրարի մեթոդը……13

Եզրակացություն……16

Օգտագործված գրականություն……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը.

Ժամանակակից աշխարհը, վերափոխվող հասարակական և սոցիալական պայմանները թելադրեցին վերանայել հանրակրթական դպրոցի ուսուցման բովանդակությունը, վերանայել գործող չափորոշիչներն ու ծրագրերը և այն ներդաշնակեցնել ժամանակակից պահանջներին:

Հանրակրթության նպատակներից մեկը աշխատանքային պատրաստվածություն ունեցող անձի ձևավորումն է: Դպրոցն ավարտած շատ շրջանավարտներ, հաճախ չեն

տիրապետում աշխատանքային այնպիսի հիմնական պարզագույն գործառույթներին ու հմտություններին, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքի ընթացքում որևէ խնդիր լուծելը, աշխատանքը պլանավորելը, ժամանակը ճիշտ կառավարելը, սեփական բյուջեն տնօրինելը, թիմային աշխատանքներում ներգրավվելը, զգացմունքները կառավարելը և այլն:

«Տեխնոլոգիա» առարկայում ձեռնարկատիրական կրթության բաղադրիչն ինտեգրելու արդյունքում սովորողների մոտ ձևավորվեցին այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն առավելագույնս կյանքի կոչել այդ ամենը:

Ձևավորված կոմպետենցիաները նրանք կկարողանան կիրառել ողջ կյանքի ընթացքում, ամենուր՝ անկախ իրենց ընտրած մասնագիտությունից և դիմակայել շուկայական հարաբերություններին: Ձեռնարկատիրական կրթությունը հենց այն գործիքն է, որը հնարավորություն կտա սեփական գործ ստեղծել և ձեռներեցությամբ զբաղվել:

Հետազոտության նպատակը.

- Ծանոթացնել ընտանեկան բյուջե կազմելու սկզբունքին:
- Խթանել հետաքրքրասիրությունը ընտանեկան բյուջեի նկատմամբ;
- Սովորեցնել պլանավորել, վերլուծել ընտանեկան բյուջեի ծախսերը և եկամուտները;
- Կատարելագործել ընտանեկան բյուջե կազմելու հմտությունները:

Հետազոտության խնդիրները.

- Ուսումնասիրել, թե ինչպիսի կարիքներ ունի ընտանիքը:
- Ծրագրել ճիշտ բաշխել բյուջեն;
- Ստեղծել սեփական գործ:

«Տեխնոլոգիա» ուսումնական բնագավառում ձեռնարկատիրական կրթության բաղադիրչի ինտեգրումը

«Տեխնոլոգիա» առարկայում ձեռնարկատիրական կրթության բաղադրիչն ինտեգրելու արդյունքում սովորողների մոտ ձևավորվում են այնպիսի հմտություններ, որոնք նրանք կկարողանան կիրառել ողջ կյանքի ընթացքում, ամենուր՝ անկախ իրենց ընտրած մասնագիտությունից և դիմակայել շուկայական հարաբերություններին: Ձեռնարկատիրական կրթությունը հենց այն գործիքն է, որը հնարավորություն կտա սեփական գործ ստեղծել և ձեռներեցությամբ զբաղվել:

«Տեխնոլոգիա» առարկայի նպատակի, բովանդակության մեջ նշված է՝

- ձևավորել նոր սոցիալ-տնտեսական իրավիճակներում ստեղծագործաբար մտածող, ակտիվ գործող և արագ կողմնորոշվող անհատներ, որոնք կկարողանան որոշել արտադրանքի պահանջարկը, քանակը և իրացման ուղիները: Դրա համար սովորողները պետք է ունակ լինեն որոշել այս կամ այն արտադրանքի կամ ծառայությունների ծավալի քանակը, գտնել և օգտագործել անհրաժեշտ տեղեկատվությունը, առաջ քաշել նոր մտքեր այս կամ այն ծագող խնդիրների լուծման համար (կոնստրուկցիայի մշակում և տեխնոլոգիաների ընտրություն), պլանավորել, կազմակերպել և կատարել աշխատանք (մեխանիզմների կարգավորում, օպերատորական գործունեություն), գնահատել նրա արդյունքները յուրաքանչյուր փուլում, կարգավորել իր գործունեությունը և բացահայտել արտադրանքի իրացման պայմանները,
- ձևավորել գիտելիքներ և հմտություններ միջոցների, նյութերի, էներգիայի և տեղեկատ-վության նպատակային օգտագործման համար,
- ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում որակական և ստեղծագոր-ծական մոտեցում:

Սովորողը պետք է՝

- **Ունենա** նախնական պատկերացում աշխատանքային գործընթացի կազմակերպման, աշխատանքի բաժանման, աշխատանքի որակի, ռիթմի, աշխատանքային գործունեության ոլորտների մասին:

- Կարողանա **համեմատել** անհատական և խմբային աշխատանքի արդյունավետությունը:

- Կարողանա **պլանավորել** աշխատանքի պրոցեսի կազմակերպումը՝ կախված նրա բնույթից (անհատական կամ խմբային): Կարողանա **բարելավել** աշխատանքի արդյունավետությունը:

- **Կարողանա** առաջադրանքին համապատասխան որոշել նպատակահարմար նյութը, հիմնավորել ընտրությունը:

- Կարողանա **կազմել** շինվածքի պատրաստման հրահանգչական քարտ և բացատրել տեխնոլոգիական օպերացիայի հաջորդական քայլերը:

- Կարողանա **պլանավորել** սեփական աշխատանքը և ստուգել գործնական աշխատանքի արդյունքը:

«Տեխնոլոգիա» առարկայի դասընթացում ձեռներեցական կրթության միասնացումը նպաստում է հետևյալ կարողությունների զարգացմանը՝

✓ մտքեր, մտահղացումներ, բիզնես գաղափարներ ստեղծելու և դրանք ներկայացնելու կարողություն,

✓ նորարարությունները հասկանալու և գնահատելու, ինչպես նաև նորարարություններ մտածելու կարողություն,

✓ բիզնես պլան, ինչպես նաև ցանկացած գործողությունների պլան կազմելու կարողություն,

✓ տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծությունները գնահատելու և դրանք կիրառելու կարողություն,

- ✓ անձնական հետաքրքրությունները և նախասիրությունները բացահայտելու կարողություն,
- ✓ շուկայական հետազոտություններ կատարելու կարողություն,
- ✓ ժամանակը ճիշտ կառավարելու և իրատեսական պլաններ կազմելու,
- ✓ ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու կարողություն,
- ✓ կառավարչական հմտություններ զարգացնելու և այլ կարողություններ:

1.http://escs.am/files/files/2020-07-28/26974fa49b53599082edfb486f62af22.pdf

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Ընտանեկան բյուջեն որոշակի ժամանակահատվածում ընտանիքի եկամուտների ու ծախսերի հանրագումարն է: Եկամուտ ասելով հասկանում ենք փող կամ նյութական արժեքներ, որոնք կարող են լինել աշխատավարձի, պարգևատրման կամ նվերի տեսքով՝ կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց: Ծախսերը որոշակի ժամանակահատվածում ընտանիքի կարիքները բավարարելու համար ծախսված դրամական կամ նյութական միջոցներն են: Եթե ընտանիքի եկամուտներն ու ծախսերն հավասար են, ապա այդպիսի բյուջեն անվանում են հավասարակշռված: Երբ ծախսերը գերազանցում են եկամուտին, ապա բյուջեն ունի պակասորդ, իսկ հակառակ դեպքում՝ բյուջեն ունի ավելցուկ: Եթե ընտանիքի բյուջեն հավասարակշռված է, ապա նշանակում է, որ պահանջմունքների բավարարման համար ֆինանսական և նյութական միջոցները ծախսվում են խելամիտ: Յուրաքանչյուր ընտանիք պետք է կարողանա ճիշտ բաշխել իր
բյուջեն:

Ընտանեկան բյուջեն պլանավորելը բավականին բարդ գործընթաց է: Պետք է ոչ միայն եկամուտները տիրապետել, այլ նաև իմանալ ապրանքների և ծառայությունների գները: Ընտանեկան բյուջեի պահպանումն իսկական արվեստ է, որին ոչ բոլորը կարող են տիրապետել: Բայց տիրապետել դրան, գոնե փորձել դա անել, խորհուրդ է տրվում յուրաքանչյուր մարդու: Երբ ճիշտ է արվում, խնդիրները սարսափելի չեն: Ինչպե՞ս սովորել պլանավորել ընտանեկան բյուջեն, որտեղի՞ց սկսել: Սկզբում պետք է կազմել ամսական եկամուտների և ծախսերի նախահաշիվը: Եկամուտ են համարվում բոլոր մուտքերը՝ աշխատավարձը, կրթաթոշակը, բնակարանի վարձակալությունից ստացված շահույթը և այլն: Ոչ կանոնավոր եկամուտները՝ դրամական պարգևները, նվեր ստացած գումարը, ևս գրանցում ենք, սակայն առանձին, քանի որ դրանք գրեթե անհնար է նախօրոք պլանավորել: Ծախսերի բաժնում կարևոր է գրանցել այն ամենը, ինչի վրա դուք գումար եք ծախսում: Ծախսերն, ի դեպ, իրենց հերթին բաժանվում են մի քանի կատեգորիաների: Կան պարտադիր և անխուսափելի ծախսեր՝ սնունդը, տրանսպորտը, կոմունալ ծառայությունների վճարները, անհրաժեշտ հագուստը: Կան ոչ պարտադիր ծախսեր, որոնցից անհրաժեշտության դեպքում կարելի է հրաժարվել՝ արձակուրդ, ռեստորան, կենցաղային տեխնիկա: Վերլուծելով ծախսերի և եկամուտների ցուցակը կարելի է անցնել նաև բյուջեի ծրագրմանը: Ամենից պարզ եղանակը մեկամսյա ծրագրումն է, բայց ավելի ճիշտ է՝ մեկ եռամսյակի կամ մեկ տարվա ծրագրումը: Եվ ահա ինչու: Տարվա ընթացքում աշխատավարձերը և կենսաթոշակները ստանում եք հավասար գումարներով, իսկ ծախսերը տարվա ընթացքում անհավասարաչափ են բաշխվում, բացի այդ, կայուն ծախսերից բացի, կան նաև միանվագ և չնախատեսված ծախսեր: Զմռանն ավելի մեծ գումարներ են գնում կոմունալ ծախսերի վրա, օգոստոսին՝ դպրոցի պարագաների, կան նաև ձեր և ընկերների ծննդյան օրերը և այլն: Կուտակումների համար նույնպես պետք է որոշակի ամսաթվեր սահմանել, նայած, թե ինչի համար եք կուտակում: Այս ամենը պետք է հաշվի առնել բյուջեն ծրագրելիս:

Որոշ դեպքերում, պարտադիր ծախսերը կազմել են ընտանեկան բյուջեի 50 տոկսը, ժամանցային ծախսերը՝ 10-20 տոկոս և 30-40 տոկոս պետք է կազմեն խնայողությունները։Այս թվերը, անշուշտ, պայմանական են։Վիճակագրության համաձայն, Հայաստանի քաղաքաղցիների սպառողական ծախսերի մոտ 50 տոկոսը բաժին է ընկնում սննդին։ Զարգացած երկրներում այդ ցուցանիշը շատ ավելի փոքր է։ Բայց դա առիթ չէ ընտանեկան բյուջե չպլանավորելու համար։ Հակառակը, ֆինանսական բարդ իրավիճակում բյուջեի ծրագրումը կարող է օգնել ճիշտ վերադասավորել եկամուտները և խուսափել պարտքերից։ Միաժամանակ, եկամուտների աճը չի նշանակում, որ դուք անպայման պետք է ավելացնեք ընթացիկ ծախսերը մինչև բյուջեի 50 տոկոսը։ Միակ բանը, ինչ պնդում են անձնական ֆինանսների կառավարման բոլոր մասնագետները, ցանկացած, նույնիսկ նվազագույն եկամտի գումարի 10%-ը պահել անկանխատեսելի ծախսերի համար։

Ֆինանսապես գրագետ անձը պետք է կարողանա օգտագործել իր գիտելիքները, ու հմտությունները առնվազն հետևյալ ուղղություններով՝

ա. Անձնական և ընտանեկան բյուջեի կառավարում

բ. Խնայողություն և երկարաժամկետ կառավարում

գ. Պարտքի կառավարում

դ. Ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում, համեմատում և պատասխանատու որոշումների կայացում (արդյունավետ գնումների իրականացում)

ե. Մասնագիտական խորհրդատվության կարևորում և ստացում

զ. Սեփական իրավունքների պաշտպանություն

է. Փողի և անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունքի ձևավորում

ը. Օգտվում է ֆորմալ ֆինանսական համակարգում առաջարկվող իրեն հարմար ֆինանսական ծառայություններից:

6 ՏԱՐԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԸ

(1)Ընտանեկան բյուջեի պլանավորումը դժվար, բայց խիստ անհրաժեշտ երևույթ է: Ամենակարևոր խորհուրդը, որ տալիս են ընտանիքներին, սովորաբար ստացած եկամտից քիչ ծախսելու խորհուրդն է, քանի որ հենց չպլանավորված ծախսերն են, որ կարող են անհարմար իրավիճակի մեջ դնել մեզ ու կանգնեցնել փաստի առաջ: Ամսական բյուջեն հարկավոր է բաժանել 6 մասի՝ 6 տարաների, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված կլինի որոշակի ծախսերի համար: Ահա թե ինչպես է գործում այս մեթոդը:

1-ԻՆ ՏԱՐԱ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾԱԽՍԵՐ(բյուջեի 55%-ը)

Այստեղ ներառվում են ընտանիքի հիմնական ծախսերը՝ սննդի, կոմունալ վճարումների, ինտերնետի, տան վարձի, տրանսպորտի, բուժման ու վարկերի գումարը: Այս ծախսերը շատ դժվար է կրճատել, այնպես որ, փորձեք գոնե չավելացնել դրանք, չվերցնել նոր վարկեր և այլն: Եվ իհարկե, խոստացեք ձեզ այս տարայից ոչ մի դեպքում գումար «պարտք» չվերցնել: 2-ՐԴ ՏԱՐԱ. ԺԱՄԱՆՑԻ ԾԱԽՍԵՐ(բյուջեի 10%-ը)

Այս տարայի գումարը անհրաժեշտ է ինքներդ ձեզ «երես տալու» համար: Այն նախատեսված է, օրինակ, ձեր սիրելի ըմպելիքը կամ հավանած աքսեսուարը գնելու համար, թատրոն ու կինո գնալու համար: Այս գումարը դուք կարող եք տնօրինել այնպես, ինչպես կցանկանաք: 3-ՐԴ ՏԱՐԱ. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ(բյուջեի 10%-ը)

Սա ձեր ընտանիքի «ետ գցած» գումարն է, որը հարկավոր է ներդնել ինչ-որ բանի մեջ, որը ձեզ լրացուցիչ եկամուտ կարող է բերել: Այս գումարը դուք չպետք է ծախսեք, մինչև չունենաք նրանից ստացված եկամուտ: Օրինակ, կարող եք ներդնել ավանդի տեսքով և ծախսել ստացված տոկոսները: Բայց այս դեպքում էլ դուք կծախսեք ոչ թե խնայած գումարը, այլ նրա միջոցով վաստակած եկամուտը:

4-ՐԴ ՏԱՐԱ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ(բյուջեի 10%-ը)

Այս տարայի գումարը նախատեսված է ինչպես ձեր երեխաների, այնպես էլ ձեր կրթության և ինքնակատարելագործման համար՝ գրքեր, սեմինարներ ու թրեյնինգներ, օտար լեզվի

կուրսեր: Ինքներդ ձեր մեջ ներդրում անելով՝ դուք ոչ միայն ինքնակատարելագործվում եք, այլև բարձրացնում եք ձեր գինը՝ իբրև մասնագետ:

5-ՐԴ ՏԱՐԱ. ՆՎԵՐՆԵՐ(բյուջեի 5%-ը)

Օգտագործեք այս տարայի գումարները հարազատների ու ընկերների համար նվերներ գնելու կամ բարեգործության համար: Սակայն փորձեք այս գումարը չծախսել ինքներդ ձեզ համար նվեր գնելու համար: Դուք միշտ կծախսեք ավելին, և մտերիմների նվերների վրա ստիպված կլինեք խնայել:

6-ՐԴ ՏԱՐԱ. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ(բյուջեի 10%-ը)

Այստեղ պետք է պահել այն գումարը, որը դուք կարող եք ծախսել խոշոր գնումների վրա՝ խնայելով մի քանի ամիս, օրինակ՝ մեքենա, կենցաղային տեխնիկա գնելու կամ ճամփորդության մեկնելու համար: Ամեն ամիս դուք պետք է այս տարայի մեջ մի փոքր ներդրում անեք: Այս տարան ոչ միայն ձեզ ապահովության զգացում կտա վաղվա օրվա հետ կապված, այլև կիրականացնի ձեր երազանքները: Տարաների մեթոդի կիրառման հիմնական սկզբունքն այն է, որ դուք իրավունք չունեք տարաներից մեկից գումար վերցնել մյուսի համար: Դուք պետք է տվյալ ամսվա համար սամանափակվեք ուրաքանչյուր տարայի գումարով: Հաճախ մենք ինքներս մեզ համոզում ենք, որ այդ պահի մեր քմահաճույքը իսկապես անհրաժեշտ է, որպեսզի մենք մեզ երջանիկ զգանք, իսկ կյանքը միապաղաղ ու անհետաքրքիր չլինի և հույս ենք տալիս մեզ, որ այս ծախսը էական դեր չի խաղա ու գումարը կհերիքի: Բայց որպես կանոն այդ քմահաճույքները երբեք չեն ավարտվում, հներին պարզապես նորերն են գալիս փոխարինելու: Արդյունքում գումարը միշտ չի հերիքում: Այնպես որ, հենց այս պահից կանգ առեք, հաշվեք ամսական ձեր բյուջեն ու տեղավորեք դրանք 6 հրաշագործ տարաների մեջ:

1.https://newmag.am/post/familybudget

Ինչպես պլանավորել ընտանեկան բյուջեն – Ծրարի մեթոդը:

(2)Այս մեթոդը անձնական ֆինանսների հաշվառման համար շատ ժամանակ չի պահանջում. այն օգտագործելու համար բավական է ամսական ընդամենը մի քանի րոպե: Քայլ առ քայլ դիտարկեք 4 ծրարի կանոնը:

Քայլ 1.Հենց ստացվում է որոշակի եկամուտ (օրինակ՝ աշխատավարձ), ապա եկամտի որոշակի բաժինը վերաբաշխվում է պահուստներին կամ խնայողություններին: Հարկավոր է կանխիկ մուտքերի առնվազն 10%-ը մի կողմ դնել պահուստների կամ խնայողությունների մեջ, բայց որքան շատ, այնքան լավ:

Քայլ 2Այնուհետև անհրաժեշտ է միջոցներ հատկացնել ամսական ֆիքսված ծախսերը վճարելու համար (օրինակ՝ կոմունալ վճարումներ, վարկի վճարումներ, բջջային կապ, ինտերնետ, ուսման վարձ, վարձավճար և այլն):

Քայլ 3Առաջին երկու քայլերից հետո մնացած ամբողջ գումարը բաժանվում է 4 հավասար մասերի և վերածվում է 4 ծրարի: Այդ իսկ պատճառով այս մեթոդը կոչվեց «Ծրարի մեթոդ» :

Ծրարներից յուրաքանչյուրը ներկայացնում է 1 շաբաթվա առավելագույն թույլատրելի ընթացիկ ծախսերը:Խստիվ արգելվում է շաբաթական ավելի շատ ծախսել, քան նախատեսված է համապատասխան ծրարում: Անհապաղ ֆինանսավորում պահանջող ցանկացած ֆորսմաժորային հանգամանքների դեպքում նման ծախսերը վճարվում են պահուստներից, քանի որ պահուստները նախատեսված են դրա համար: Այնուամենայնիվ, եթե շաբաթական ավելի քիչ գումար է ծախսվում, քան հատկացվել է ծրարի մեջ, ապա մնացածը կարող է լինել.

- ✓ Ավելացնել պահուստներ կամ խնայողություններ;
- ✓ Ավելացնել հաջորդ ծրարին (հաջորդ շաբաթվա համար);
- ✓ Ծախսեք ինչպես ցանկանում եք։

Բնականաբար, այդ հնարավորությունները դասավորված են առաջնահերթության նվազման կարգով, բայց եթե իսկապես անհրաժեշտ է գումար ծախսել սեփական հաճույքի համար, ապա, այլ պայմաններով, այս դեպքում դա թույլատրելի է։ Ի դեպ, բացարձակապես պետք չէ միջոցները բաժանել 4 մասի. Դուք կարող եք, օրինակ, պատրաստել 3 մաս (յուրաքանչյուրը 10 օրվա համար), կամ 5 մաս (յուրաքանչյուրը 6 օրվա համար): Մեթոդի էությունը պետք է մնա անփոփոխ։

Այսպիսով, իր ողջ պարզությամբ, 4 ծրար մեթոդը երաշխավորո

ւմ է անձնական բյուջեի պլանավորման ամենահիմնական կանոնների

պահպանումը.

• Պահուստների և խնայողությունների ձևավորում.

• Հաստատուն ծախսերի պարտադիր վճարում, որը կանխում է պարտքերի գոյացումը.

• Ինքներդ ձեզ չպլանավորված ծախսերով պարգևատրելու ունակություն, պայմանով, որ դուք տնտեսապես գումար եք ծախսում ընթացիկ կարիքների համար:

Ո՞ւմ համար է այս մեթոդը:

- ✓ Մարդիկ, որոնց անձնական բյուջեն փոքր է.
- ✓ Մարդիկ, ովքեր չեն ցանկանում գործ ունենալ բարդ հաշվարկների հետ:
- ✓ Մարդիկ, ովքեր չափազանց ծույլ են ժամանակ հատկացնել իրենց անձնական բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվառմանը, բայց, միևնույն ժամանակ, ցանկանում են սկսել պլանավորել բարելավել իրենց ֆինանսական վիճակը:

2.https://umi-kumi.ru/hy/guides/kak-splanirovat-semeinyi-byudzhet-metod-konvertov-pravilo-4-konvertov/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում տնտեսությունը զարգանում է կայծակնային արագությամբ։ Վերջին տարիների ֆինանսական ճգնաժամը նույնպես ապացուցել է , թե ինչքան կարևոր է այն հանգամանքը, որ անհատներն ու ընտանիքներն ունենան անհրաժեշտ տեղեկատվություն, գիտելիքներ և հմտություններ՝ ֆինանսապես ճիշտ որոշումներ կայացնելու համար։ Ճգնաժամը ցույց է տվել նաև, որ անձանց և ընտանիքների ֆինանսական բարեկեցությունը ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն գործոններից է։ Ֆինանսական կրթություն երեխան պետք է ստանա փոքր հասակից։ Դպրոցներում ֆինանսական կրթության ներդրման նպատակն է սովորողներին զինել գիտելիքով, հմտություններով և վստահությամբ՝ գիտակցված և պատասխանատու ֆինանսական որոշումներ կայացնելու համար։Աշակերտները ոչ միայն պատկերացում ունեն, այլև իրենք են կազմում ընտանեկան բյուջեի, ծախսերի և խնայողությունների սխեման։ Նրանք ուսումն ավարտելուց հետո կկարողանան ինքնուրույն և արդյունավետ կառավարել անձնական ֆինանսները, կտիրապետեն անձնական բյուջեի արդյունավետ կառավարման մասին անհրաժեշտ ողջ տեղեկատվությանը, որպեսզի կարողանան խնայողություններ կատարել և չբախվել խնդիրների հետ ֆինանսական հաստատությունների հետ առնչվելիս ու ֆինանսական ծառայություններից օգտվելիս։ Փոքր հասակում ձևավորված առողջ ֆինանսական սովորություններն առաջին քայլն են հասուն տարիքում ֆինանսապես կայուն ապագա ունենալու համար։ Կարիք չկա սպասելու, որ երեխան դառնա չափահաս, ավարտի դպրոցը/համալսարանը, ընդունվի աշխատանքի կամ տեղափոխվի առանձին ապրելու, որպեսզի այդ ժամանակ նոր անդրադառնաք այս հարցին։ Փոքր հասակում ձևավորված առողջ ֆինանսական սովորություններն առաջին քայլն են հասուն տարիքում ֆինանսապես կայուն ապագա ունենալու համար։ Երեխաներին է փոքրուց սովորեցնել հասուն տարիքում ֆինանսական հաջողության հասնելու ամենամեծ գաղտնիքը՝ «խնայել-ծախսել-ներդրել» սկզբունքը։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն երեխաները, որոնք սովորել են փոքր տարիքում խնայել, հասուն տարիքում նույնպես պահպանում են այս սովորությունը։

Օգտագործված գրականության ցանկ

1. ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ <<ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ԱՌԱՐԿԱՅՈՒՄ ԻՆՏԵԳՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

2.https://umi-kumi.ru/hy/guides/kak-splanirovat-semeinyi-byudzhet-metod-

konvertov-pravilo-4- konvertov/

3.https://newmag.am/post/familybudget

4. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ,Երևան2019